Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 30-ի N 668-Լ որոշման

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են փրկարարական ծառայողներին համազգեստ տալու կարգի և համազգեստի օգտագործման ժամկետների հետ կապված հարաբերությունները:

2. Փրկարարական ծառայության համազգեստ տրամադրելը ենթադրում է փրկարարական ծառայողին սույն որոշման N 1 հավելվածով սահմանված ձևի համազգեստի առանձին տեսակներով, տարբերանշաններով և համազգեստի մաս կազմող այլ պարագաներով ապահովում՝ կախված ծառայողի կոչումից և ծառայության տեսակից:

3. Փրկարարական ծառայության համազգեստը տրամադրվում է սույն հավելվածով սահմանված կարգով և օգտագործման ժամկետներով:

4. Փրկարարական ծառայության համազգեստ առաջին անգամ տրամադրելու համար հիմք է հանդիսանում փրկարարական ծառայության անցնելու մասին համապատասխան իրավական ակտը:

ԳԼՈՒԽ 2. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԸ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Փրկարարական ծառայողին համազգեստի ուսադիրներ և համազգեստի մաս կազմող այլ պարագաներ հատկացվում են հասանելիք համազգեստի հետ միասին: Ուսադիր հատկացվում է նաև ծառայողին կոչում շնորհելիս:

6. Փրկարարական ծառայության տոնական համազգեստի օգտագործման ժամկետներն են՝

Աղյուսակ N 1

NN ը/կ	Անվանումը	Քանակը՝ մեկ մարդու համար	Կրման ժամկետը
1.	Տոնական համազգեստի գլխարկ	1 հատ	10 տարի
2.	Տոնական համազգեստի կիսաբրդյա կիտել (տաբատով կամ կիսաշրջազգեստով)	1 հատ	10 տարի
3.	Տոնական համազգեստի փողկապ	1 հատ	10 տարի
4.	Տոնական համազգեստի գոտի	1 հատ	10 տարի
5.	Տոնական համազգեստի ձեռնոց	2 զույգ	10 տարի
6.	Տոնական համազգեստի սպիտակ վերնաշապիկ՝ երկարաթև	1 հատ	10 տարի
7.	Տոնական համազգեստի սպիտակ վերնաշապիկ՝ կարճաթև	1 հատ	10 տարի
8.	Տոնական համազգեստի ուսադիր /ոսկեգույն և սպիտակ/	2 զույգ	10 տարի
9.	Տոնական համազգեստի պիլոտկա՝ կանացի	1 հատ	10 տարի
10.	Տոնական համազգեստի շարֆ	1 հատ	10 տարի
11.	Տոնական համազգեստի ձմեռային վերարկու	1 հատ	10 տարի
12.	Տոնական համազգեստի երկարաճիտք կոշիկ	1 զույգ	10 տարի

7. Թույլատրվում է սույն հավելվածի 6-րդ կետի N 1 աղյուսակի 7-րդ կետով սահմանված կարճաթև վերնաշապիկը փոխարինել նույն աղյուսակի 6-րդ կետով սահմանված երկարաթև վերնաշապիկով և հակառակը:

8. Փրկարարական ծառայության ամենօրյա համազգեստի օգտագործման ժամկետներն են՝

Աղյուսակ N 2

NN ը/կ	Անվանումը	Քանակը՝ մեկ մարդու համար	Օգտագործման ժամկետը
1.	Ամենօրյա մուգ փիրուզագույն համազգեստ (տաբատ, բաճկոն, կեպի)	1 լրակազմ	1 տարի
2.	Շապիկ փիրուզագույն՝ կարճաթև	2 հատ	1 տարի

3.	Շապիկ փիրուզագույն՝ երկարաթև	1 հատ	1,5 տարի
4.	Ուսադիր ամենօրյա մուգ փիրուզագույն	2 զույգ	1 տարի
5.	Ամենօրյա կոշիկ (սպայական)	1 զույգ	2 տարի
6.	Ճտքավոր կոշիկ	1 զույգ	3 տարի
7.	Կաշեգոտի	1 հատ	2 տարի
8.	Ամենօրյա կիտել-տաբատ (սպայական)	1 լրակազմ	4 տարի
9.	Ամենօրյա վերնաշապիկ կարճաթև (սպայական)	1 հատ	2 տարի
10.	Ամենօրյա վերնաշապիկ երկարաթև (սպայական)	1 հատ	2 տարի
11.	Փողկապ ամենօրյա	1 հատ	4 տարի
12.	Ձմեռային երկարաթև փիրուզագույն սվիտեր	1 հատ	2 տարի
13.	Ձմեռային փիրուզագույն գլխարկ/պիլոտկա	1 հատ	5 տարի
14.	Ձմեռային փիրուզագույն բաճկոն և տաբատ	1 լրակազմ	5 տարի
15.	Ձեռնոց ձմեռային	1 զույգ	2 տարի
16.	Կարակուլե ձմեռային գլխարկ	1 հատ	5 տարի
17.	Քաղաքացիական պաշտպանության ամենօրյա համազգեստ /բաճկոն, տաբատ, կեպի/	1 լրակազմ	1 տարի
18.	Շապիկ խակի կանաչ՝ կարճաթև	2 հատ	1 տարի
19.	Շապիկ խակի կանաչ ՝ երկարաթև	1 հատ	1,5 տարի
20.	Քաղաքացիական պաշտպանության ամենօրյա համազգեստի ձմեռային բաճկոն և տաբատ	1 լրակազմ	5 տարի
21.	Քաղաքացիական պաշտպանության համազգեստի ձմեռային երկարաթև սվիտեր	1 հատ	2 տարի
22.	Քաղաքացիական պաշտպանության համազգեստի ձմեռային գլխարկ	1 հատ	5 տարի
23.	Քաղաքացիական պաշտպանության համազգեստի գոտի	1 հատ	2 տարի
24.	Ամենօրյա սև համազգեստ /բաճկոն, տաբատ, կեպի, շապիկ/	1 լրակազմ	1 տարի
25.	Սև համազգեստի ձմեռային բաճկոն և տաբատ	1 լրակազմ	5 տարի

26.	Սև համազգեստի ձմեռային երկարաթև սվիտեր	1 հատ	2 տարի
27.	Սև համազգեստի ձմեռային գլխարկ	1 հատ	5 տարի
28.	Ջրափրկարարի ամառային համազգեստ	1 լրակազմ	1 տարի
29.	ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի «INSARAG»-ի ամենօրյա համազգեստ /բաճկոն, տաբատ, կեպի, ժիլետ/	1 լրակազմ	5 տարի
30.	ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի «INSARAG»-ի շապիկ	1 հատ	5 տարի
31.	ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի «INSARAG»-ի ձմեռային բաճկոն	1 հատ	5 տարի
32.	ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի «INSARAG»-ի ձմեռային գլխարկ	1 հատ	5 տարի
33.	Աշխատանքային համազգեստ	1 լրակազմ	1 տարի
34.	Թիկնոց-անձրևանոց	1 հատ	5 տարի
35.	Փրկարարի ձմեռային բաճկոն և տաբատ	1 լրակազմ	5 տարի
36.	Փրկարարի ձմեռային կոշիկներ	1 զույգ	5 տարի

9. Քաղաքացիական պաշտպանության համազգեստը կրում են քաղաքացիական պաշտպանության վարչության ստորաբաժանումների ծառայողներն ու Փրկարար ծառայության տնօրենի հրամանով սահմանված՝ այլ ստորաբաժանումների ծառայողներ:

10. Փրկարար ծառայության նվագախումբը, ինչպես նաև նվագախմբի փրկարարական ծառայող չհանդիսացող աշխատակիցները հանդերձավորվում են տոնական և ամենօրյա հանդերձանքով:

11. Տոնական հանդերձանքը կարող է հատկացվել նաև զորահանդեսներում, հանդիսավոր երթերում ու նիստերում, պատվո պահակախմբի կազմում և այլ հանդիսավոր արարողություններում ընդգրկվող փրկարարական ծառայողներին՝ անկախ կոչումից:

12. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի հրամանով փրկարարական ծառայության համազգեստը՝ որպես անհատական հուշանվեր, կարող է տրամադրվել միջազգային և տեղական այլ կառույցների գործընկերներին:

13. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի հրամանով կարող են հանդերձավորվել նաև առանձին աշխատանքների մեջ ներգրավված փրկարարական ծառայող չհանդիսացող այլ անձինք:

14. Արձագանքող ստորաբաժանումների փրկարարական ծառայողների ձմեռային համազգեստի և ձմեռային գլխարկի/պիլոտկայի օգտագործման ժամկետը սահմանել 3 տարի:

15. Փրկարարական ծառայողի ծառայության տեսակը փոխվելիս, փրկարարական ծառայողը հանդերձավորվում է տվյալ ծառայության տեսակին համապատասխան:

16. Օտարերկրյա պետություններ ուսման նպատակով գործուղված ծառայողին կարող է տրամադրվել նոր համազգեստ, եթե անցել է նրա համազգեստի օգտագործման ժամկետի կեսը և ավելին:

17. Ամենօրյա կիտել-տաբատն ու վերնաշապիկը կրելու իրավունք ունեն սպայական կոչում ունեցող փրկարարական ծառայողները:

18. Արձագանքող ստորաբաժանումների փրկարարական ծառայողների ճտքավոր կոշիկի կրման ժամկետ սահմանել 1 տարի:

19. Սև գույնի համազգեստը կրելու իրավունք ունեն միայն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը և նրա տեղակալները:

20. Կարակուլե գլխարկ և ձմեռային համազգեստի վրա կարակուլե օձիք իրավունք ունեն կրելու Փրկարար ծառայության տնօրենը, տնօրենի տեղակալները, բարձրագույն պաշտոն զբաղեցնող և առնվազն գնդապետի կոչում ունեցող փրկարարական ծառայողները:

21. Արձագանքող ստորաբաժանումների հերթափոխային ծառայության մեջ ընդգրկված փրկարարական ծառայողների ամենօրյա մուգ փիրուզագույն համազգեստի օգտագործման ժամկետը սահմանել 3 տարի:

22. Արտակարգ իրավիճակների ժամանակ կամ դեպքի վայրում վնասված, ժամկետից շուտ շարքից դուրս եկած, հետագա օգտագործման համար ոչ պիտանի հանդերձանքի փոխարինումը նորով կատարվում է փրկարարական ծառայողի անմիջական հրամանատարի (պետի) զեկուցագրի հիման վրա:

23. Ծառայության տնօրենի հայեցողությամբ, փրկարարական ծառայողը տարբեր միջոցառումներին մասնակցելու համար կարող է արտահերթ հանդերձավորվել: Արտահերթ տրված հանդերձանքի օգտագործման ժամկետը հաշվարկվում է նախորդ հանդերձանքի օգտագործման ժամկետի ավարտից հետո:

24. Փրկարարական ծառայության հատուկ հանդերձանքի օգտագործման ժամկետներն են՝

Աղյուսակ N 3

NN ը/կ	Հանդերձանքի անվանումը	Քանակ	Օգտագործման ժամկետը
1.	Ջրասուզակի ամառային հանդերձանք	1 լրակազմ	5 տարի
2.	Ջրասուզակի ձմեռային հանդերձանք	1 լրակազմ	10 տարի
3.	Քիմիական, մանրէաբանական և այլ ախտահարման օջախներում աշխատելու համար պաշտպանիչ համազգեստ	1 լրակազմ	10 տարի
4.	Սակրավորի հանդերձանք	1 լրակազմ	10 տարի
5.	Ռազմական սաղավարտ	1 հատ	10 տարի
6.	Ջրահաբաճկոն	1 հատ	10 տարի
7.	Մարտական հագուստ	1 լրակազմ	5 տարի
8.	Երկարաճիտք կոշիկներ՝ հրակայուն, ջրակայուն	1 զույգ	5 տարի
9.	Լեռնափրկարարի հանդերձանք	1 լրակազմ	5 տարի

25. Սույն հավելվածի N 3 աղյուսակով սահմանված հատուկ հանդերձանքը հատկացվում է ստորաբաժանումներին որպես փրկարարական գույք՝ կախված ծառայության տեսակից: Գույքը պահպանվում է ջոկատներում:

26. Փրկարարական ծառայողին հատկացված հանդերձանքն ամրակցվում է փրկարարական ծառայողների անհատական ամրակցման քարտերում՝ համաձայն սույն հավելվածի N 1 ձևի:

27. Փրկարար ծառայության ստորաբաժանումների կողմից ստացված հանդերձանքի բաշխումն իրականացվում է բաշխման ցուցակների միջոցով, որը ներկայացվում է՝ համաձայն սույն հավելվածի N 2 ձևի:

Ձև N 1

ԱՄՐԱԿՑՄԱՆ ՔԱՐՏ N

Ազգանուն ____________ Անուն ____________ Հայրանուն ____________

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

____

____

Կոչում ____________

Պաշտոն ____________

Ընդունված է « » ____ 20 թ. N ____

Տեղափոխված է « » ____ 20 թ. N ____

Ազատված է « » ____ 20 թ. N ____

ՉԱՓՍԵՐ

Համազգեստ ____________

Գլխարկ ____________

Կոշիկ ____________

Հանդերձանքի անվանում	Նորմեր	20 թ.			20 թ.			20 թ.			20 թ.			20 թ.		
		Ամսաթիվ	Քանակ	Եղ	Ամսաթիվ	Քանակ	Եղ	Ամսաթիվ	Քանակ	Եղ	Ամսաթիվ	Քանակ	Եղ	Ամսաթիվ	Քանակ	Եղ

Ձև N 2

ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

N Ե/Կ -------- , «___» _____ 20 թ. ելքի կարգագրով ստացված հանդերձանքի

Հ/Հ	Քարտերի հերթական համարները	Անուն, Ազգանուն, Հայրանուն	Կոշում	Ստացված հանդերձանքի անվանումն ըստ կարգագրի (չափման միավոր)	Ստացված հանդերձանքի անվանումն ըստ կարգագրի (չափման միավոր)	Ստացված հանդերձանքի անվանումն ըստ կարգագրի (չափման միավոր)	Ստացողի ստորագրություն
		Ընդամենը					

Համապատասխան ստորաբաժանման ղեկավար, կոչում /ստորագրություն/ Անուն, Ազգանուն

Ամիս, ամսաթիվ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22.04.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ